

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/2

9 նոյեմբերի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 09.10.2012թ-ի նիստում քննության է առնվել քաղաքացի Մայիս Սահրադյանի 28.09.2012թ-ի դիմում-գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.09.2012թ. թիվ 1410809 վարչական ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

«ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 25.09.2012թ. թիվ 1410809 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է, որ Ֆիզիկական անձ Մայիս Սահրադյանը առանց համապատասխան պետական գրանցման, առանց հարկային մարմիններում հաշվառման, Երևան քաղաքի Գ-3 թաղամասի թիվ 18 շենքի ետնամասում գտնվող մոտ 20 մ.ք. մակերես ունեցող ավտոտնակներից մեկում կազմակերպել է մանրածախ առևտուր: Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 30.08.2012թ. թիվ 316-5 որոշման, հարկվող օբյեկտը հաշվարկվել է «Հարկերի մասին» «Օրենքի 22-րդ հոդվածի և «Կառավարության 1998թ. սեպտեմբերի 18-ի թիվ 580 որոշմամբ սահմանված կարգի՝ երրորդ անձանցից ստացված տեղեկությունների, հիմք է ընդունվել նաև ֆիզիկական անձ Մայիս Սահրադյանի կողմից 30.08.2012թ-ին տրված գրավոր բացատրությունը, որով վերջինս հայտնել է, որ նշված հասցեում ապօրինի կերպով ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում տաս ամիս և օրական համախառն եկամուտը կազմում է 3000 դրամ: Մայիս Սահրադյանի մանրածախ առևտրի կետում իրերի և փաստաթղթերի հետազոտման ընթացքում հայտնաբերվել է մեկ տետր, որի մեջ գրառված է վերջինիս օգոստոս ամսվա առևտուրը, որի հանրագումարը կազմում է 2.516.070 դրամ: Ֆիզիկական անձի կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամուտը տաս ամիսների համար հաշվարկվել է հետևյալ կերպ: Օգոստոս ամսվա համար 2.516.070 դրամ, իսկ մնացած ինն ամիսների համար 822000 դրամ (274 օրx3000 դրամ): Արդյունքում համախառն եկամուտը կազմել է 3.338.070 դրամ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» «Օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի դրույթները՝ վարչական ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.002.850 դրամ:

Քաղաքացի Մայիս Սահրադյանի գանգատում մասնավորապես նշված է.

«Հայտնում եմ Ձեզ, որ ես ավտոտնակում առանց համապատասխան պետական գրանցման կազմակերպել եմ մանրածախ առևտուր, որի համար կազմվել է ակտ 2.000.000 դրամի չափով:

Տեղեկացնում եմ, որ իմ մեկ օրվա առևտուրը կազմում է 3000 դրամ և հնարավորություն չունեմ վճարելու այդ գումարը: Նշեմ նաև, որ գործազուրկ եմ, խնամքիս ունեմ երկու ուսանող երեխա: Ընտանիքս գտնվում է ֆինանսական ծանր վիճակում, այդ իսկ պատճառով առանց համապատասխան պետական գրանցման կազմակերպել եմ վերոհիշյալ առևտուրը: Ինչպես նաև տեղեկացնում եմ, որ ձմռան 3 ամիսների ընթացքում առևտուր չեմ արել:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ընտանիքիս ծանր ֆինանսական վիճակը, Մայիս Սահրադյանը խնդրում է վերանայել կիրառված տուգանքի չափը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով քաղաքացի Մայիս Սահրադյանի և խախտման փաստն արձանագրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ վարչական ակտը կազմված է «Օրենսդրության պահանջներին համապատասխան:

Քննարկման ընթացքում քաղաքացի Մայիս Սահրադյանը նշեց, որ հիշատակված ապօրինի գործունեությամբ զբաղվել է ոչ պարբերաբար և նման ձևով եկամուտ վաստակելու

